ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ

ՔԱՂԱՔԱՑԻ ՆԱՐԻՆԵ ՄԿՐՏՉՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 23-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ 1-ԻՆ ԵՎ 2-ՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, 24-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ, 38-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 7-ՐԴ ՄԱՍԻ, 79-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 4-ՐԴ ՄԱՍԻ 2-ՐԴ ԿԵՏԻ ԵՎ 80-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Հիմք ընդունելով ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմի՝ 12.02.2013թ. «Քաղաքացի Նարինե Մկրտչյանի անհատական դիմումով գործը քննության ընդունելու վերաբերյալ» որոշումը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **ՈՐՈՇԵՑ.**

1. Համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի՝ «Քաղաքացի Նարինե Մկրտչյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ ընտրական օրենսգրքի 23-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ նախադասությունների, 24-րդ հոդվածի, 38-րդ հոդվածի 7-րդ մասի, 79-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի և 80-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի դատաքննությունն սկսել 2013 թվականի մարտի 5-ին, ժամը 10.00-ին։

2. Համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի՝ գործով զեկուցողներ նշանակել սահմանադրական դատարանի անդամներ Հ. Նազարյանին և Վ. Հովհաննիսյանին։

3. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա գործի դատաքննությունն անցկացնել գրավոր ընթացակարգով։

4. Հաշվի առնելով սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմի առաջարկությունը և որոշման մեջ բերված փաստարկները՝ մերժել դիմումի ապահովման նկատառումներով վեճի առարկա նորմերի գործողության կասեցման վերաբերյալ դիմողի միջնորդությունը։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

12 փետրվարի 2013 թվականի
ՍԴԱՈ-10